

# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝ ՆՊԱՍՏԵԼ ԴԱՍԱՀԱՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԲԱԶՄԱԲՈՎԱՆԴԱԿ ԴԱՐՁԱԵԼՈՒՆ

Մարտի 19-ին տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել է ինտելեկտուալ-ժամանցային «Այլ կերպ» խաղ, որին մասնակցել են տարրեր հավաքական թիմեր:

«Մրցութային երեք փուլերի ընթացքում պատասխանելով տրամաբանական, մասնագիտական և հետաքրքրաշարժ հարցերի՝ մասնակիցները ոչ միայն ցույց են տվել իրենց ինտելեկտուալ պատրաստվածության մակարդակը, այլ միաժամանակ ձեռք են բերել նոր գիտելիքներ։ Նմանօրինակ միջոցառումները շարունակական բնույթ կկրեն, և կփորձենք ընդգրկել ֆակուլտետի մյուս մասնագիտություններից ուսանողներ», - նշել է ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ Դ. Դանիելյանը:

Խոսելով խաղի արդյունքներից՝ ֆակուլտետի դեկան Ռուզաննա Մանգասարյանը նշել է, որ այդպիսի միջոցառումները նպաստում են հաճալսարանական կյանքն ավելի հետաքրքիր ու բազմաբովանդակակ դարձնելուն։ Խաղի արդյունքում մրցանակային տեղեր գրաղեցրած թիմերը խրախուսվել են պատվոգրերով։

# ՆՊԱՏԱԿԸ ՆՊԱՍՏԵԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱԿԱԽՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՐՈՁՉՈՒԹՅԱՆԸ



**Պոեզիայի միջազգային օրվան ընդառաջ բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհուրդը կազմակերպել է հեղթական ինտելեկտուալ-իսաղ մրցույթը, որն ընդգրկում էր հարցեր գրականությու-**

Խաղի ընթացքում հնչել են նաև երաժշտական համարներ: Չաղթող է ճանաչվել «Արև» թիմը, իսկ լավագույն երեք մասնակիցները արժանացել են գրքերի:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆԱՍՏԱՐՈՒՆ»	
ամսաթերթ	Զարդարություն
Հիմնադրի՝	
Դաշտական պետական հանաստարուն»	
ՊՈԱԿ	
ատարակվում է 1994 թվականից	Հետո

<p>Խմբագիր՝ ինք Սառաջյան</p> <p>Տեր հասցեն՝ Ա.Պողչ 5: (047) 94 04 91</p>	<p>Տպարանակ 400</p> <p>Տպագրվում է Կրցախի պետական համալսարանի հրատարակության տպարանում</p>	<p>Իմացիր քո համալսարանի մասին:</p> <p>Այցելիր ասւ.ամ կայք:</p> <p><a href="http://www.asu.am">www.asu.am</a></p>
--	--	---

# ԱՐԵՎԻՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՐԵՎԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԽԱՏՁՐԱ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

A black and white photograph of a two-story stone building with arched windows and a balcony. The words "U.S. POST OFFICE" and "CLARENCE" are visible above the entrance.

№ 02(230)  
մարտ - 2021

# ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ «ԱՐՑԱԽԻ ԱՌՕՐՅԱՆ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՎՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿՄՓՈՓՈՒՄԸ

Մարտի 19-ին ԱրՊԵ-ում տեղի է ունեցել «Արցախի առօրյան» խորագրով լավագույն հոդված մրցույթի արդյունքների ամփոփումն ու մրցանակաբաշխությունը, որին ներկա էին ԱՀ ԿԳՍՍ նախարար Լուսինե Ղարախանյանը, փոխնախարար Գայանե Գրիգորյանը, ԱրՊԵ ռեկտոր Արմեն Սարգսյանը, հրավիրվածներ, մրցույթի մասնակիցներ: Մրցույթը հայտարարվել և հովանավորվել է Ղրիմի հայ համայնքի և «Լուս» բարեգործական հիմնադրամի կողմից: Մրցանակաբաշխությանը հեռուստակամրջով մասնակցել են նաև Ղրիմի հայ համայնքի ղեկավար Գեղրգի Նալբարյանը, «Լուս» բարեգործական հիմնադրամի ղեկավար, փ.գ.դ., պրոֆեսոր, Ղրիմի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի ղեկան Օլեգ Գաբրիելյանը, Սիմֆեռոպոլի հոգևոր համայնքի առաջնորդ Տեր-Ներսեսը, Ղրիմի հայ համայնքի ներկայացուցչիներ:

Սիցոցառման մասնակիցներին ողջունել է ԱՐ ԿԳՍՍ նախարարը՝ շնորհակալություն հայտնելով նախաձեռնության հետինականներին:

«Պատերազմի սկզբից ցայսօր ակնառու է Սփյուռքի աջակցությունը: Մենք մեր բոլոր ծրագրերում նախատեսում ենք Սփյուռքի հետ համագործակցությունը: Շնորհակալություն եմ հայտնում Սփյուռքի հայությանը՝ մեր կողքին լինելու, մեր և Սփյուռքի ինքնության պահպանմանը աջակցելու համար», -նշել է նախարարը՝ վստահեցնելով, որ Արցախը վերականգնվելու և ուժեղանալու է կրկին:

ԱրԴՊ ռեկտոր Արմեն Սարգսյանը, կարևորելով Արցախի պետական համալսարանի և Ղրիմի համայնքի միջև համագործակցությունը, նրանակարաչխությունը համարել է այդ համագործակցության առաջին հաջողված ծրագիրը:

«Ղրիմի հայ համայնքը հայտնի է իր հայրենանվեր գործունեությամբ դեռ պատմության խորքերից, և այն այսօր էլ շարունակվում է: Չուսով եմ, որ մեր համագործակցությունը շարունակական բնույթ կլորի», -ասել է ԱրՊՇ ռեկտորը՝ հաճախարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության և իր անունից շնորհակալություն հայտնելով Ղրիմի հայ համայնքին ու նիջոցառման կազմակերպիչներին:

Ղրիմի հայ համայնքի ղեկավար Գեորգի Յակոբյանը, իր հերթին ողջունելով Անդրկաներին, կարևորել է Արցախի



հետ համատեղ ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը և նշել, որ համագրծակցությունը շարունակական կլիմի:

Ներկաներին ողջունել է նաև «Լույս» բարեգործական հիմնադրամի ղեկավար, փ.գ.դ., պրոֆեսոր, Ղրիմի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի ղեկան Օլեգ Գաբրիելյանը՝ իր հերթին կարևորելով Արցախի հետ հաճագործակցությունը և պատրաստականություն հայտնել հետագայում և նպաստելու հաճագործակցության արդյունավետությանը:

Միջոցառման ընթացքում մրցույթի բոլոր մասնակիցները խրախուսվել են հավաստագրերով, նվերներով, իսկ մրցանակային տեղեր գրադեգորած մասնակիցները՝ նաև արժանացել դրամական պարգևի: Մրցանակային առաջին տեղը գրադեգորել է Թանարա Բաբյամը /7000ՌԴ ռուբլի/, Երկրորդ՝ Լուսինե Վանյանը /5000 ՌԴ ռուբլի/, իսկ Երրորդ տեղը՝ Լիզա Միրզոյանը/3000 ՌԴ ռուբլի/: Դրամական խրախուսանքի են արժանացել նաև Ինգա Աղամյանը, Աննա Բալայանը, Նոննա Սաղյանը /յուրաքանչյուրը՝ 2000-ական ՌԴ ռուբլի/: Միջոցառման ընթացքում Ղրիմի հայ համայնքի կողմից, որպես բարեգործություն, ԱՀ ԿԳԱՍ նախարարությանն է փոխանցվել մեկ միլիոն ՀՀ դրամ՝ Աղախում ուսկերչությունը՝ որպես արիեստ, զարգացնելու և ուսուցանելու նպատակով ծրագիր իրականացնելու համար:

Անփոփելով միջոցառումը՝ ԱՅ ԿԳՄՍ փոխնախարար Գայանե Գրիգորյանը շնորհակալություն է հայտնել միջոցառման կազմակերպիչներին ու մասնակիցներին՝ նշելով. «Արցախում գրեթե բոլորն են տաղանդավոր, մնում է բացահայտել տաղանդի կայծն ու բորբոքել այն: Հուսով եմ՝ մեր համագործակցության արդյունքում դեռ շատ տաղանդներ ենք բացահայտելու»:

## ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՃՐՈՒ ՆԻՄ

Մարտի 19-ին Արցախի պետական համալսարանում կայացել է գիտխորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվել և հաստատվել են ուսումնական գործընթացին, կառավարմանը վերաբերող մի շարք հարցեր ու կարգեր:

Նախքան գիտխորհրդի օրակարգային հարցերին անցնելով՝ ռեկտոր Ա. Սարգսյանը համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության անունից շնորհավորել է պ.գ.ք., դոցենտ Վարդգես Սաֆարյանին 70-ամյակի առթիվ՝ շնորհելով նրան ԱրՊԴ 50-ամյակին նվիրված հուշամեդալ և արժանացնելով դրամական պարգև:

«Վարդգես Սաֆարյանը երկար տարիներ ղեկավարել է ԱրՊԴ պատմության ամբիոնը: Նա տատվել են ԱրՊԴ պատվավոր կոչումներ շնորհելու, ԱրՊԴ 50-ամյակին նվիրված հուշամեդալով՝ պարգեստրուման, 2021-2022 ուսումնական տարվա առաջնորդվել սահմանված կարգով:»

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը օրակարգի առաջին հարցով ներկայացրել է առաջին ընթացիկ ստուգումների անցկացման նախապատրաստական աշխատանքները: Նրա խոսքով՝ պահանջված են անհրաժեշտ փաստաթղթերը, առարկայական ցանկերը և ժամանակացույցերը: Ուլորտի պատասխանատուն հարցերը են ամբիոնի վարիչներին՝ մեկ անգամ



տուրյան պատասխանատու պաշտոնյաների, տարբեր գերատեսչությունների ղեկավարների, կառույցների ներկայացուցիչների հետ և հանրությանը հույզող տարբեր հարցերի պատասխաններ ստանալ անմիջապես առաջին ծերթից: Մուտքը կլինի ազատ, և նման հանդիպումներին կարող են մասնակցել համալսարանի տարբեր աշխատակիցներ, դասախոսներ և ուսանողներ:

Գիտխորհրդը քննարկել և հաստատել է ԱրՊԴ պատվավոր կոչումների շնորհելու, ԱրՊԴ 50-ամյակին նվիրված հուշամեդալով՝ պարգեստրուման, 2021-2022 ուսումնական տարվա բակալավրի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ընդունելության նախատեսվող տեղերի ցանկը լիազոր մարմին ներկայացնելու մասին հարցերը:

Գիտխորհրդը քննարկել և հաստատել է նաև «Արցախ. ներկան և ապագան» խորագրով ծրագրը, ըստ որի նախատեսվում է առաջիկայում կազմակերպել հանդիպում-քննարկումներ հանրապետությունում:

«Բոլոր կրթական բարեփոխումների հիմքում պետք է կանգնած լինի դասախոսը, ուստի խնդիրների լուծման ուղիներ նախանշելու համար կարևոր է յուրաքանչյուր դասախոսի տեսակետը, ինչը բացահայտելու արդյունավետ միջոցներից է նաև կլոր սեղան-քննարկումների ծնաշափը», - նշել է ղեկանը՝ ներկայացնելով մասնագիտական կրթական ծրագրերը կազմելու առանձնահատկությունները, դրանց հիմնական սկզբունքները՝ նպատակը, վերջնարդյունքին հասնելու ժամապարհը:

ԱրՊԴ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեղրդի Սահակյանի խոսքով՝ ԱրՊԴ ռազմակարգական ծրագրով նախանշված են բոլոր այն քայլերը, որոնք ուղղված են որակի բարելավմանը:

«Փոխվել են ժամանակները, նոր ժամանակները նոր պահանջներ են թելադրում: Դասին պետք է կիրառել նոր ներողներ, կազմակերպել քննարկումներ, խրախուսել ուսանողների ստեղծարար գաղափարներն ու զարգացնել վերլուծական մտածողություն», - նշել է պրոռեկտորը՝ կարևորելով ուսուցման գործընթացում ինովացիոն ներողների կիրառումը:

Իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.ք., դոցենտ Գրետա Արզումանյանի կարծիքով ավագ սերնդի դասախոսների մոտ առավելություն է փորձը, իսկ երիտասարդների մոտ՝ նորագույն տեխնոլոգիանե-

## ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ «ԴԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՅՈՎ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՍԱՐԿՈՒՄ

Մարտի 24-ին ԱրՊԴ պատմության և իրավագիտության ֆակուլտետում տեղի է ունեցել «Դասի արդյունավետության բարձրացման ուղիներն ու խնդիրները» թեմայով կլոր սեղանարկում՝ ֆակուլտետի ղեկան, պ.գ.ք., դոցենտ Արմինե Խաչատրյանի նախաձեռնությամբ: Քննարկմանը մասնակցում էին ԱրՊԴ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեղրդի Սահակյանը, ՌԱԿ վարիչ Ծ. Սաղյանը, ֆակուլտետի ամբիոնների վարիչները, դասախոսները:

Ողջունելով քննարկման մասնակիցներին և կարևորելով թեմայի արդիականությունը ու քննարկման անհրաժեշտությունը՝ ֆակուլտետի ղեկանը հավաստել է, որ դասի արդյունավետության բարձրացմանը միտված պարբերաբար գգալի աշխատանքները են իրականացվում են դասախոսների կողմէ գործունեությունում ու քննարկմանը առաջնային դաշտում:



Ինի տիրապետելու հմտությունները:

«Պետք է կարողանալ այս երկու առավելությունները համադրել, և այդ դեպքում կապահովվի արդյունավետությունը», - նշել է Գ. Արզումանյանը:

«Կերտել ապագա՝ նշանակում է հիմնվել հնի վրա և ավելացնել նորը: Չպետք է հրաժարվել ինից, այլ՝ ավանդականին ավելացնել նորարարությունը», - համոզմունք է հայտնել պատմության և քաղաքագիտության ամբիոնի երկարամյա փորձ ունեցող դասախոս Անդրեյ Պետրոսյանը՝ հավելելով, որ մարդկային գործոնի ակտիվությունն անհրաժեշտություն է բոլոր գործընթացներում արդյունավետություն ապահովելու հարցում:

ԱրՊԴ ՌԱԿ վարիչ Ծ. Սաղյանի խոսքով՝ ժամանակն է քննարկումներից անցնելու գործի:

«Բոլոր դասախոսները պետք է ծանոթ լինեն ՈԱԾ-ի (Որակի ազգային շրջանակ) բնութագրի մեջներին, և դրանք պետք է ներառվեն առարկայական նկարագրերում: Դասընթացը պետք է առաջարի խնդիրներ, պահովի այն խնդիրների լուծումը, որոնց հետագայում բախվելու է ուսանողը ավարտելու հետո աշխատելիս», - ասել է Ծ. Սաղյանը՝ հավելելով, որ այդ ամենը լինելու դեպքում կապահովվի արդյունավետությունը:

Կլոր սեղան-քննարկմանը իրենց տեսակետներն են հայտնել նաև ավագ, միջին և երիտասարդ սերնդը:

Անփոփելով քննարկումը՝ ֆակուլտետի ղեկանը նշել է, որ թեման տարրողությունակ է և նախատիպ քննարկումների կազմակերպումը շարունակական է լինելու:

## ՄԵՄԻՆԱՐ-ՊԱՐԱՊՄՈՒԹԵՐ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՈՒՄ՝ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

**Մարտի 4-ին Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողների համար կազմակերպվել է սեմինար-պարապմունք՝ հետազոտական աշխատանք կատարելու հմտություններն ու իմացությունները զարգացնելու նպատակով:** Միջոցառումը կազմակերպվել է ֆակուլտետի ՈՒԳԸ և ՈՒԽ նախագահների համատեղ ջանքերով:



\* \* \*

**Բանասիրական ֆակուլտետի ՈՒԳԸ նախաձեռնությամբ, ողջունելով ներկաներին, հետազոտական ոլորտում առաջին քայլերը կատարող ուսանողներին մաղթել է հաջողություններ:**

«Դուք պետք է կարողանաք Ձեր ունեցած տեսական գիտելիքները համակարգել, օգտագործել վիճակագրական նյութերը և համադրել գործնական ասպարեզի հետ: Այս ամենի հիման վրա Էլ Չեզ մոտ կծեռավորվի տնտեսագիտական մտածելակերպ», - նշել է Ո. Մանգասարյանը:

Սեմինարի ընթացքում ուսանողներին ներկայացվել են, թե ինչպես պետք է կատարեն հանձնարարություն հետազոտական աշխատանքները, ինչ կառուցվածքային մասերից պետք է այն բաղկացած լինի, իմանան նախապատրաստական քայլերն ու գիտական պահանջները: Ուսանողները նաև իրազեկվել են այն թերացումների մասին, որոնք հաճախ հանդիպում են կատարված գիտահետազոտական աշխատանքներում՝ ապագայում նմանօրինակ թերացումներից խուսափելու համար:

Սեմինարի արդյունքում ուսանողները պատկերացում կազմեցին ակադեմիական գործիքության հիմունքների մասին, ծեղը բերեցին անհրաժեշտ իմացություններ և գիտելիքներ հետագայում այն գործնականում կիրառելու համար:

## ԱԶԳԻ ԳՈՅԱՏԵՎԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՍԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԻՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԾՈՒՐՁ ՀԱՄԱԽՄԲՎԵԼՆ Է

**Մարտի 15-ին Արցախի պետական համալսարանում դասախոսությամբ հանդես են եկել ք.գ.դ., պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը ու պ.գ.թ., դրցենտ Գագիկ Սաֆարյանը: Դասախոսության թեման առնչվում էր 100 տարի առաջ կնքված Սոսկվայի պայմանագրին:**

ԱՅ ԿԳՍՍ նախարար Լ. Ղարախանյանը ողջունել է ներկաներին՝ նշելով, որ այս օրերին շատ կարևոր են նմանօրինակ այցելությունները, քանի որ դրանց արդյունքում ներ երկրի ապագայի նկատմամբ հավատը դառնում է ավելի ամուր և իրատեսական:

«Մենք կարծ ժամանակահատվածում պետք է վերականգնենք, կրթության միջոցով պետք է ավելի ուժեղանանք, միշտ պետք է հիշենք, որ աշխարհում հաղթում են կրթության և գիտության շնորհիվ», - ասել է Լ. Ղարախանյանը:

Պ.գ.թ., դրցենտ Գագիկ Սաֆարյանը, ով եղել է նաև «Պարաբաղ» կոմիտեի հիմնադիրներից, ներկայացրել է 1921թ. մարտի 16-ին կնքված Սոսկվայի պայմանագրի պատմական հետևանքները և զուգահեռներ անցկացրել ներկայացնելու տիրող իրավիճակի հետ: Նրա խոսքով Արցախյան շարժման հարցը միշտ էլ բարձր է դասվել տարբեր բնագավառների ներկայացուցիչների կողմից:

«Մենք պետք է կարողանանք պատմությունից ճիշտ դասեր քաղել: Այսօր, ավելի քան երեսէ, մենք պետք է գործնք մեծ եռանդով և համախմբվածությամբ», - նշել է բանախոսը՝ հավելելով, որ Արցախում ապրող յուրաքանչյուր ոք հերոս է, իսկ Արցախի պետական համալսարանի ուսանողները ազգապահպան գործին իրենց մաս-



նակցությունն ապահովում են մայր բուհի կողմից իրենց առջև դրված պահանջները իրագործելով և գիտելիքները անընդհատող հարստացնելով:

Գագիկ Սաֆարյանը, ով նաև «Պաշտպան հայրենյաց» ազգային մշակութային հիմնադրամի նախագահն է, հանդիպման ընթացքում պատրաստականություն է հայտնել համալսարանի գրադարանը համալրել անհրաժեշտ գրքերով, եթե համալսարանականները ներկայացնեն պահանջվող գրքերի ցանկը:

Բ.գ.դ., պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը իր ելույթում նշել է, որ Արցախի հետ իր կապը շատ ամուր է և այն երկար տարիների պատմություն ունի: Ներկայան անգամ Արցախ այցելել է՝ իր աշերով տեսնելու հետազոտագմյան իրականությունը և մոտիկից ծանոթանալու դրանից բխող հարցերին:

«Ազգի գոյատևման գլխավոր նախապայմաններից մեկը իր մշակութային արժեքների շուրջ համախմբվելու է: Ոգին կորցնելուց հետո մարմինը հեշտ է կորցնելը: Մենք պետք է ելք գտնենք ստեղծված իրավիճակից դուրս գալու համար, պետք է ապրենք, արարենք, վերակառւցենք՝ չնոռանալով մեր երազանքների մասին», - նշել է Դ. Գասպարյանը՝ հավելելով, որ յուրաքանչյուր ոք պետք է իմանա իր անելիքները նոր և առաջնարարություն ծրագրեր մշակելով:

Հանդիպման ընթացքում բանախոսները պատասխանել են նաև ուսանողների և դասախոսների հարցերին:



## ԱՐԴՅ ԴԱՍԱԽՈՍ, ԲԱՆԱՍՏԵՂԾ ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ ԳԻՐՔԸ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ՄՐՑԱՆԱԿԻ

Արդյ դասախոս, բ.գ.դ., պրոֆեսոր,  
ՀՂԴ գիտության վաստակավոր գործիչ,  
քանաստեղծ Սոկրատ Խանյանի  
«Կրակ չէ՝ ինչ է» գիրքը «Պոեզիա»  
անվանակարգում արժանացել է 77  
գրողների միության «Դրանու և Մա-  
նուշակ Սիմոնյաններ» մրցանակա-  
րաշխության մրցանակի:

«Կրակ չէ՝ ինչ է» գրքում, որը Ս.  
Խանյանի թվով 21-րդ քնարերգական  
ժողովածուն է, տեղ են գտել վերջին  
տարիներին գրած անտիպ քանաստեղ-  
ծությունները: Յավատարիմ իր ստեղ-  
ծագործական նախասիրություններին՝  
հեղինակը պատկերում է 21-րդ դարի  
հայ մարդու հարուստ ներաշխարհը՝ կյանքի բազ-  
մաշերս երանգներով: Գրքում տեղ գտած բանաս-  
տեղծությունները արտացոլում են հեղինակի խոհե-  
րի գեղարվեստական ծիրը, որտեղ իրենց առանց-  
քային տեղն ունեն Արցախը, սեր հայրենիքի, բնու-  
թյան, նարդու հանդեպ, հայրենիքի համար մարտն-  
չող զինվորը, արարող ու միշտ պայքարող հայի  
ոգին:

«Կրակ չէ՝ ինչ է» գրքի մասին արդեն իրենց  
խոսքն են ասել գրականագետները: Ուշագրավ է  
Պետրոս Ղեմիրյանի «Նորերը թող գան ու մրցեն  
ինձ հետ...» վերտառությանը հոդվածը՝ տպագրված  
77 գրողների միության պաշտոնաթերթ «Գրական  
թերթ»-ում:

Խոսելով գրքի խորագրի մասին՝ Պ. Ղեմիրյանը  
նշում է. «Պատահական չէ, որ «Կրակ չէ՝ ինչ է» ժո-  
ղովածուի համար հեղինակն ընդիմանուր խորագրի է  
ընտրել համանուն շարքի վերնագիրը: Քանզի հա-  
վատացած է, որ արմատների, ժողովրդի դարավոր  
ինաստնության բովում բոծված ազգային ավան-  
դույթների, Զայրենիքի պաշտպանության և խա-  
ղաղության համար պայքարի նպատակը, ի վերջո,  
մարդու անհատական աշխարհի թանկ ու նվիրական  
զգացմունքների լիարժեք դրսնորումն է, մեծ սիրո  
հոգեկան ըմբոշխնումը, որի առջև անզոր են  
տարիները»:



Ս. Խանյանի գիրքը բացվում է իր եռթյունը բնու-  
թյագրող հարցագրույցով, որտեղ հեղինակը, խոսե-  
լով բանաստեղծելու արվեստի մասին, նշում է.

«Բանաստեղծություն գրելը աստվածային ին  
շնորհն է, իմ արյան կանչը, իմ եռթյունը: Կյանքն  
ընկալում եմ բանաստեղծորեն. եթե չգրեմ, շնչա-  
հեղձ կլինեմ, որովհետև.»

Առանց երգի ի՞նչ առավոտ, //եվ ի՞նչ կարոտ  
առանց երգի...»:

Կարևորելով մրցանակի նշանակությունը՝ Ս.  
Խանյանն ընդգծում է հանգամանք, ըստ որի՝ Արցա-  
խում, Սփյուռքում և ՀՀ-ում ստեղծվող գրականու-  
թյունը գտնվում է մեկ ընդհանուր գրական դաշտում  
և մրցանակաբաշխությանը նաև Արցախում ապրող  
և ստեղծագործող գրողին ընդգրկելը դրա փաս-  
տարկներից մեկն է:

Հեղինակը մեզ հետ գրույցում կարևորեց նաև  
գրականության մեջ բարեկամ, ամերիկահայ գրա-  
կան բարերար Յանատ Սիմոնյանի գործութեությու-  
նը՝ Սփյուռքում հայապահանության և հայկական  
արժեքների պահպանան գործում ունեցած ավան-  
դույթներից:

Արցախի պետական համալսարանի ուսանողու-  
թյունն ու դասախոսական կազմը շնորհավորում են  
Ս. Խանյանին՝ մրցանակի արժանանալու կապակ-  
ցությամբ՝ մարդելով ստեղծագործական նորանոր  
հաջողություններ:

## ՄԻԶՈՑԱՌՈՒՄ ՍԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Կանանց միջազգային օրվա առթիվ  
մարտի 8-ին Արդյ մամկավարժության  
և սպորտի ֆակուլտետի ՈՒԳԸ նախա-  
ծեռնությամբ կազմակերպվել է «Կա-  
նանց միջազգային օրվա խորհուրդն  
ու կարևորությունը հետպատերազմյան  
շրջանում» խորագրով միջոցառում:

Միջոցառումը սկսելուց առաջ ներ-  
կաները մեկ րոպե լուսավորությամբ հարգել  
են արցախյան պատերազմներում զի-  
ված բոլոր քաջորդիների հիշատակը:

«Դագարավոր ընտանիքներում գա-  
րունեներ են մարել: Այդ առյուծ տղանե-  
րի թանկ կյանքի գնով է, որ այսօր  
մենք կանք ու գարուն ենք ապրում», - նշել է ֆա-  
կուլտետի ՈՒԳԸ նախագահ Է. Աղօլմանյանը:

Միջոցառման մասնակիցները ներկայացրին կա-  
նանց տոնի նախապատությունը, թե մարտի 8-ն  
ինչպես և ուժ շնորհիվ հռչակվեց Կանանց միջազ-  
գային օր: Այսուհետև ուսանողներն իրենց ելույթնե-  
րում ներկայացրել են կանանց իրավունքների  
մասին կատարած ուսումնասիրություններն ու  
կարևորել օրվա խորհուրդը:

Միջոցառմանը ներկա էին ֆակուլտետի դե-  
կան Շ. Այդինյանը, ամբիոնների վարիչներ, դասա-  
խոսներ և ուսանողներ:

Ֆակուլտետի դեկան Շ. Այդինյանը շնորհավո-



րել է ներկաներին՝ մաղթելով ամենանվիրական  
երազանքների իրականացում և անսպաս սեր-  
կյանքի բելադրած բոլոր փորձությունները հաղ-  
թահարելու համար:

«Դայ կնոջ կերպարը մեր պատմության ամե-  
նալուսավոր էջերից է: Ցանկանում եմ, որ բոլոր  
Զեր տաղանդով և կատարելությամբ աշխարհին ի  
ցույց դնեմ հայ կնոջ ստեղծարար ու արարող  
տեսակը», - նշել է նա:

Մանկավարժության և հոգեբանության ամբիո-  
նի վարիչ է. Բաղդասարյանը նույնական շնորհա-  
վորել է բոլոր կանանց և աղջիկներին տոն օր-  
վա կապակցությամբ և նշել. «Երբ թերթում ենք  
մեր պատմության էջերը, տեսնում ենք, որ միայն զո-  
րուի մայրերն են կարողացել ծնել, սմել, դաստիարակել և  
իրենց ազգին տալ ամենա-  
թանկ՝ հարազատ որդիների կյանքը: Մենք ազգովի  
երախտապարտ ենք և գլուխ ենք խոնարհում նման  
հայ մայրերի առջև»:

Միջոցառուման ընթացքում ուսանողները հանդես  
են եկել նաև ասմունքով ու  
երաժշտական համարներով:

## ԱՐԴՅՈՒՆԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՄԻՋՈՑԱԿՈՒՄ

**ԱրԴԴ** հոգեբանական կենտրոնը  
մանկավարժության և հոգեբանության  
ամբիոնի հետ հաճատեղ կազմակեր-  
պել է կլոր սեղան-քննարկում՝ նվիր-  
ված դեպրեսիայի հաղթահարման մի-  
ջազգային օրվան: Միջոցառման  
նպատակն էր մարդկանց ուշադրու-  
թյունը հրավիրել հոգեկան առողջու-  
թյան խնդիրների վրա: Կլոր սեղան-  
քննարկմանը մասնակցում էին «Հոգե-  
բանություն» մասնագիտության 1-ին և  
2-րդ կուրսերի ուսանողներ, դասա-  
խոսներ:



Քննարկման մասնակից ուսանողները հանդես են եկել թեմատիկ զեկուցումներով՝ անդրադառնալով դեպրեսիայի պատճառներին, դրսևորմանը, հաղթահարման ուղիներին, խոսել պատերազմական տրավմաներով պայմանավորված հոգեբանական խնդիրների ու դրանց լուծման մասին:

Արդյ հոգեբանական կենտրոնի տնօրեն Անահիտ Գասպարյանի խոսքով՝ նման ձևաչափով արդիական հնչեղություն ունեցող խնդիրներին անդրադառնալը նպաստում է ուսանողների ինքնուրույն հետազոտական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև նոր գիտելիքների ծեռքբերմանը:

# «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԱՀՈՍՈՒԹՅՈՒՆ

Սարտի 26-ին Արցախի պետական համալսարանում դասախոսությամբ հանդես է եկել լրագրող, վերլուծաբան, հրապարակախոս Նաիրի Շոխիկյանը: Դասախոսության թեման էր «Սանագիտական գործունեության առանձնահատկությունները. անվտանգային հարցեր»: Քննարկումը կազմակերպվել է «Արցախ. Աերլան և ապագան» խորագրով ժրագրի շրջանակներում, որին ներկա էին ուսանողներ և դասախոսներ:

ՈՒԾՉՅՏԱԳ պրոռեկտոր Վ. Յարամիշյանը  
ներկայացրել է բանախոսին և խոսել 44-օրյա  
պատերազմում կամավորական խմբի հետ նրա  
իրականացրած նպաստավոր աշխատանքի մասին

«Ինձ համար մեծ պատիվ է այսօր գտնվել Արցախում, հանդիպել Արցախի պետական համալսարանի ուսանողների հետ, լսել Զեր կարծիքները մասնագիտական գործունեության և անվտանգային հարցերի շուրջ», - նշել է Ն. Յո-



Խիկյան՝ կարևորելով ռազմական և քաղաքագիտական լրագրության դերը:

Բանախոսը հարց-պատասխանի միջոցով ներկայացրել է լրագրության դերը այօրվա իրականության մեջ և պարզաբանումներ տվել տարածաշրջանային, աշխարհաքաղաքական հարցերի շուրջ:

# LUT3U TU STUTLUNR QUPETR



Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմանը մը բառագրվել է «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարի չորրորդ հատորը՝ «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարի չորրորդ հատորը՝

ողվրդագիտությունը. Ազգագրություն», աշխատա-  
սիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ բ.գ.թ.,  
դոցենտ, **ԼՂԴ** գիտության վաստակավոր գործիչ Ար-  
մեն Սարգսյանի:

«Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը, որը հիմնադրվել է Արցախի պետական համալսարանի գիտխորհրդի որոշմամբ և նվիրվում է Արցախի ժողովրդագիտության երեք բնագավառներին՝ ազգագրությանը, բանահյուսությանն ու բարբառին վերաբերող և առնչվող այն հիմնական ուսումնասիրությունները, աշխատությունները, ժողովածուները, հոդվածները, գիտական գեկուցուները, ճանապարհորդական նոթերը, հուշագրությունները և այլ նյութերը, որոնք գրառվել ու հրատարակվել են հայ և օտարազգի տարբեր ազգագրագետների, բանագետների ու բանահյավաքների, բարբառագետների, այլ բնագավառների գիտնականների, հասարակական ու եկեղեցական գործիչների, ճանապարհորդների, գրողների, Շուշի քաղաքի և որոշ գյուղերի ուսումնական հաստատությունների ուսուցիչների ու տեսուչների կողմից 19-րդ դարի կեսերից առ այսօր։ Յուրաքանչյուր բնագավառին վերաբերող առաջին հատորի առաջաբանում

որվում է տվյալ բնագավառի ուսումնասիրության պատճությունը, իսկ եզրափակող հատորի վերջում՝ ամբողջական մատենագիտական ցանկը՝ ամփոփ նկարագրություններով։ Նյութերը ներկայացվում են դրոշակի խմբագրությամբ և սրբագրությամբ (բացառությամբ բարբառով գրառված նյութերի)՝ ընդուանուր առմամբ համապատասխանեցնելով ուղղագրության ու տառադարձության արդի սկզբունքներին։ Բնօրինակներում ընդգրկված լուսանկարները, գծագրերը, քարտեզները և այլ բնույթի պատկերները, վերջում տրված ծանոթագրությունները, անձնանունների ու տեղանունների ցանկերը հատո-

Մատենաշարի չորրորդ՝ սույն հատորում  
շնորհած են հետխորհրդային շրջանում կատար-  
ված՝ Արցախի ազգագրությանը վերաբերող ուսում-  
նասիրությունները:

Լույս է տեսել Ա.Յու. Սարգսյանի «Մատենագիւղություն Արցախի ազգագրության ուսումնասիրութեան» գիրքը:

\* \* \*

ԱՐԵԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԹՈՒԹՅԱՆ,  
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄԱԿԱՐԴԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՋԻՆ ԳԵՐԱԲԵՆ, ՎԻԼԱՏՈՒ

Ա.ՅՈՒ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՏԵՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆ-2020

## ՄԻԶՈՅԱՌՈՒՄ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Մարտի 16-ին Արցախի պետական համալսարանի բնագիտական ֆուլկուլտետի ուսանողները նշեցին «պի» թվի միջազգային օրը՝ աշխարհում նշվող ամենաարտասովոր տոներից մեկը: Միջոցառումը նախաձեռնել էր ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ Ալիսիա Դադյանը, որին իրավիրված էին նաև մաթեմատիկայի ամբիոնից դասախոսներ և ուսանողներ:

Տոնի կապացությամբ ուսանողներին շնորհավորել է ամբիոնի վարիչ Լ. Արքահամյանը և ողջունելի համարել նմանօրինակ միջոցառումների նախաձեռնումն ու իրականացումը:

«Արդեն մի քանի տարի է՝ տարբեր ձևաչափերով նշվում է «պի» թվի միջազգային օրը: Վստահ եմ, որ այս ամգամ ևս բոլորդ մեծ տպավորություններ և մասնագիտական գիտելիքներ կստանաք», - նշել է նա:

«Սարթնատիկան մի գիտություն է, որի գաղափարները, դատողությունները և խորհրդանշները ծառայում են որպես լեզու: Այն բացատրում է դժվարին երևույթների օրինաչափությունները, կանխագուշակում այն մեծ ճշգրտությամբ և նախօրոք նկարագրում երևույթների ընթացքը», - իր խոս-



քում նշել է միջոցառման նախաձեռնող Ա. Դադյանը՝ հավելով, որ առանց մաթեմատիկայի անհնար է պատկերացնել գիտական և տեխնիկական առաջնորդաց:

Ուսանողները «պի» թվի միջազգային օրը նշեցին յուրահատուկ կերպով, մանրամասն ներկայացրին երկրաչափական, դասական և համակարգչային հաշվարկմերի դարաշրջանում տոնի նախապատմությունը, «պի» թվի կիրառությունը և նշանակությունը երկրաչափության մեջ:

## «ՄԱՐՏՅԱՆ ՌԵՌԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 101 ՏԱՐԻ ԱՏՅ. ՊԱՏՍԱԿԱՆ ԱՆԴՐԱՇԱՐՁ ԽՈՐԱԳՐՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ



Կան ընթերցումներին զեկուցումներով հանդես են եկել ֆակուլտետի տարբեր կուրսերի ուսանողներ, ելույթ ունեցել դասախոսներ: Միջոցառման մասնակիցներն իրենց ելույթներով անդրադարձել են 1920 թ. Շուշիի հայ ազգաբնակչության կոտորածին, որի հետևանքով գրեթե հիմնովին ավերվել էր Շուշին, սպանվել էին հազարավոր հայեր, տասնյակ հազարավորներ էլ ստիպված են եղել լքել քաղաքը, ոչնչացվել հայկական մշակութային ժառանգությունը, թալանվել մարդկանց ունեցվածքը, պղծվել սրբավայրերը:

Մարտի 22-ին ԱրՊՅ պատմության և իրավագիտության ֆակուլտետում պատմության և քաղաքագիտության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել են գիտական ընթերցումներ՝ նվիրված 1920 թ. մարտյան ոճրագործություններին:

«Մարտյան ոճրագործություններ. 101 տարի անդրադարձ» խորագրով գիտա-

գիտական ընթերցումների ձևաչափով պատմության արդիական հնչեղություն ունեցող հիմնախնդիրներին անդրադանալը հնարավորություն է տալիս ուսանողներին գիտելիքներ ստանալ նաև ոչ ֆորմալ կրթության ձևաչափով, գարգացնել հետազոտական կարողություններն ու հմտությունները:

## «ՄՈՍԿՎԱՅԻ և ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՊԱՏՍԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ» ԹԵՍԱՅՈՎ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մարտի 17-ին Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության և քաղաքագիտության ամրիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Ն. Սարումյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ «Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմական, իրավական կողմերը և արդիականացում»: Կլոր սեղան-քննարկմանը ներկա են եղել ֆակուլտետի դեկան Ա. Խաչատրյանը, իրավունքի ամբիոնի վարիչ Գ. Արզումանյանը, ամբիոններից դասախոսներ և ուսանողներ:

Պ.գ.թ., դոցենտ Ն. Սարումյանը, կարևորելով թեմայի քննարկման անհրաժեշտությունը, նշել է, որ պետք է կարողանանք պատմությունից ճիշտ դասեր քաղել և չկրկնել նույն սխալները:

«Այսօր ապրում ենք մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ կարևոր է նման թեմաների շուրջ քննարկումների, տեսակետների համադրություններ կատարելու: Շրջանառվում է այն բյուր միտքը, թե իրեն Մոսկվայի և Կարսի պայմանագրերի 100 տարին լրանալուն զուգահեռ պետք է ինչ-որ դրական փոփոխություններ տեղի ունենան հօգուտ հայ ժողովրդի», - նշել է քննարկման ակտիվ մասնակից՝ «Իրավագիտություն» 1-ին կուրսի ուսանողուհի Սատոհիկ Բաբայանը՝ հավելով, որ նմանատիպ քննարկումները ուսանողներին տալիս են արդիական եզրակացություններ անելու և սխալ վերլուծություններից զերծ մնալու հնարավորություն:



Փորձելով դրանք արդիականացնել:

«Մխալ եզրակացությունների հիմնական պատճառն այն է, որ հասարակության տարբեր խավեր տեղյակ չեն պայմանագրերի բովանդակությանը և դրանց իրական տեսքին: Նախ պետք է վերլուծել քաղաքական իրավիճակը՝ զուգահեռներ տանելով 1921 և 2021 թվականների միջև, ապա կատարել վերլուծություններ», - նշել է քննարկման ակտիվ մասնակից՝ «Իրավագիտություն» 1-ին կուրսի ուսանողուհի Սատոհիկ Բաբայանը՝ հավելով, որ նմանատիպ քննարկումները ուսանողներին տալիս են արդիական եզրակացություններ անելու և սխալ վերլուծություններից զերծ մնալու հնարավորություն:

## ԲՈՒՐ-ՂՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐՁԱՆԱԿՈՒՄ ԱՐԴՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՂՊՐՈՑ



Կացրել Ստեփանակերտի Վ. Զհանգիրյանի անվան N11 ավագ դպրոցի աշակերտների հետ: Քննարկման թեման էր «Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմաիրավական կողմերը»: Միջոցառումը կազմակերպվել է ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ և իրավունքի ամբիոնի աջակցությամբ:

«Միջոցառման նպատակն է բուհ-դպրոց կապի ամրապնդումն ու զարգացումը, ինչպես նաև ուսանողների կողմից մասնագիտական փորձ ձեռք բերելու: Քանի որ հասարակության շրջանում կան որոշակի բյուր կարծիքներ՝ կապված պայմանագրերի 100-ամյակի հետ, մենք որոշեցինք նախաձեռնել նմանատիպ միջոցառում մանրամասնելու պայմանագրի կետերն ու սկզբունքները», - նշել է Ա. Սարգսյանը:

Ուսանողները հանդես են եկել պայմանագրի իրավական և պատմական կողմերին առնչվող ելույթներով և պատասխանել աշակերտների հարցերին: